ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Եղեգնաձոր

«14» 05 2015թ

N 45

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ նախագահի 1997թվականի մայիսի 6-ի թիվ 728-ՆՀ հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 19.12.2013թ. № 12-Ն և 14.12.2013թ. № 371-Ն համատեղ հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարզի տարածքում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի :

2. Վարչական հսկողություն իրականացնել ժամանակացույցով՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հանձնաժողովին՝ վարչական հսկողության արդյունքներ ներկայացնել մարզպետի քննարկմանը:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 1

ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015թ. 05.14-ի թիվ 45 որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Ա. Հովսեփյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

Ս. Աղաջանյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Ս. Հովսեփյան Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ (հանձնաժողովի անդամ)

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված թիվ 2

ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015թ. 05.14 -ի թիվ 45
որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

1. ք. Եղեգնաձոր - 18.05.2015թ.
2. ք. Ջերմուկ - 19.05.2015թ.
3. ք. Վայք - 20.05.2015թ.
4. գյուղական համայնքներ - 21.05.2015թ. - 27.05.2015թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

Վարչական հսկողության առաջադրանք

'14' .....05..... 2015թ.

Մարզպետի №45 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական հսկողություն իրականացնել՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի, քաղաքաշինության բնագավառում իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին 19.12.2013թ. № 12-Ն և 04.12.2013թ. № 317 համատեղ հրամանով նախատեսված գործառույթները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**